

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆԻ ՍԱՐՄԵՆԻ

**ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ.00.04 - «Դատական իրավունք՝ դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АНИ САРМЕНОВНА МИКАЕЛЯН

ПРОБЛЕМЫ ПОДСУДНОСТИ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 - “Судебное право – судостроительство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности”

ЕРЕВАН-2021

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Հովհաննիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս. Ա. Դիրանդյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վ. Կ. Դալլաքյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հուլիսի 1-ին, ժամը 12³⁰-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թվականի մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ. դոցենտ

Տ. Հ. Սուլջյան

**Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете**

Научный руководитель: доктор юрид. наук,
профессор **В.В. Оганесян**

Официальные оппоненты: доктор юрид. наук,
профессор **С. А. Дилбандян**
кандидат юрид. наук,
доцент **В. Н. Даллакян**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита диссертации состоится 1-ого июля 2020 г. в 12³⁰ часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г.Ереван, ул.Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 19-ого мая 2021 года.

Ученый секретарь специализированного совета: кандидат юридических наук, доцент

Т. О. Суджян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմայի արդիականությունը: Քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրներից մեկը քաղաքացիական գործի ճիշտ և ժամանակին քննությունն ու լուծումն է: Այդ խնդիրը կարող է լուծվել դատարանների գործունեության հստակ կազմակերպման միջոցով՝ իրական և արդյունավետ դատավարական նորմերի գոյության պայմաններում՝ այդ թվում և ընդդատության կանոններին վերաբերվող: Դրա հետ կապված շատ կարևոր է ընդդատության կանոնների կարգավորման հստակությունը և դատարանների կողմից դրանց պահպանումը արդարադատություն իրականացնելիս:

Դատական պաշտպանության իրավունքը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև, որ իրավաբանական գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվի օրենքով սահմանված, այլ ոչ թե կամայականորեն ընտրված դատարանի կազմի կողմից:

Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (63-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը(14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվեցիան (6-րդ հոդված):

Կոնկրետ քաղաքացիական գործի ընդդատության ճիշտ որոշումը հանդիսանում է անհրաժեշտ պայման դատարան դիմելու իրավունքի իրականացման և արդարադատության մատչելիության իրավունքի երաշխավորման համար:

Ընդդատության կանոնների խախտման հետևանքով տուժում են ոչ միայն առանձին անձանց շահերը, այլև արդարադատությունն ինքն իրենով: Դրա հետ մեկտեղ ինչպես ցույց է տալիս քաղաքացիական գործերով ընդդատության որոշման ոլորտում ձևավորված դատական պրակտիկան՝ դատական մարմինների կողմից քաղաքացիական գործի լուծման ժամանակ թույլ տրված շատ սխալներ հանդիսանում են ընդդատության կանոն-

ների խախտման հետևանք: Դա շատ հաճախ հանգեցնում է ժամանակի մեծ մասի կորստի, ինչպես նաև և՛ դատական մարմինների, և՛ իրենց խախտված կամ վիճարկվող իրավունքների կամ օրինական շահերի դատական պաշպանության համար դիմող անձանց միջոցների անիմաստ վատնման, ինչը իր հերթին էականորեն սահմանափակում է արդարադատության հասանելիությունը: Հետևաբար, առաջին ատյանի դատարանի կարգավիճակով գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանների իրավասությունների հստակ սահմանազատումը, այլ խոսքերով՝ քաղաքացիական գործերի ընդդատությունը ունի կարևոր նշանակություն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրականացման գործում:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների ընթացքում դատական համակարգը մի քանի անգամ էական փոփոխությունների ենթարկվեց, ինչի արդյունքում էականորեն փոփոխվեց նաև յուրիսդիկցիոն մարմինների, այդ թվում դատարանների իրավասությունն իրավաբանական գործերի քննության և լուծման ոլորտում: Կատարված փոփոխությունները չըջանցեցին նաև քաղաքացիական գործերի ընդդատության ինստիտուտը, որը ներկայումս խորը գիտական վերլուծության կարիք է զգում: Քննարկվող ինստիտուտի հետ կապված հարցերը բավականին լուրջ փոփոխությունների ենթարկվեցին նաև նոր ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Դրական գնահատելով ընդդատության ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերում կատարված օրենսդրական փոփոխությունները՝ այդուհանդերձ գտնում ենք, որ առկա իրավակարգավորումը դեռևս հեռու է կատարյալ լինելուց. մի շարք իրավանորմերում առկա ձևակերպումները տարըմբռնումների տեղիք են տալիս, իսկ, մի շարք հարցեր դուրս են մնացել օրենսդրի ուշադրությունից: Այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել խորքային փոփոխություններ կատարել ընդդատության ինստիտուտը կանոնակարգող իրավական նորմերում, ինչի մասին վկայում է նաև ատենախոսության մեջ բարձրացված մի շարք հարցերի կապակցությամբ ձևավորված և մեր կողմից ուսումնասիրված դատական պրակտիկան:

Ընդդատության կանոններն ամրագրող իրավանորմերը վերջին տարիներին մի շարք գործերի շրջանակներում մեկնաբանության են ենթարկվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, որպիսի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել վերաիմաստավորել այդ իրավանորմերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշում-

ների տեսանկյունից:

Այսպիսով, ընդդատության՝ օրենսդրորեն ամրագրված կանոնները պրակտիկայի պահանջներին համապատասխանեցնելու, այդ կանոններից յուրաքանչյուրի նշանակությունը, նպատակը, իրավաչափ կիրառման պայմանները բացահայտելու և գործող դատավարական օրենսդրության մեջ առկա բացթողումներն ու թերությունները վերացնելու անհրաժեշտությունը օբյեկտիվորեն արդիականություն են հաղորդում սույն հետազոտությանը:

Հեղազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմք են կազմել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատություններ, այդ թվում՝ Ռ. Գ. Պետրոսյանի, Դ. Վ. Կարապետյանի, Յու.Կ. Օսիպովի, Մ.Ս. Շաքարյանի, Մ.Կ. Տրեուշնիկովի, Դ.Մ. Չեչուտի, Գ.Ա. Ժիլինի, Տ. Պ. Երոխինայի, Ե.Վ. Կուզնեցովայի, Գ.Լ. Օսոկինայի, Մ.Ա. Ռոժկովայի, Ն.Գ. Ելիսեյեվի, Ա.Ա. Դարգաչևի, Կ.Ա. Չոդինովսկիխի և բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններ:

Սակայն, հայրենական իրավական գրականության շրջանակներում ընդդատության հիմնախնդիրները (հատկապես 2018թ. ընդունված նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի համատեքստում) դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն և դրանց վերաբերյալ համալիր գիտական հետազոտությունները բացակայում են: Ասվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 2018թ. ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով բավականին փոփոխություններ են կատարվել ընդդատության ինստիտուտի հետ կապված, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել նորովի հետազոտել նախկինում գոյություն ունեցած, ինչպես նաև նոր ամրագրված՝ ընդդատության ինստիտուտի վերաբերյալ հարցերը:

Հեղազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում ընդդատության կանոնների կիրառման արդյունքում ծագող դատավարական հարաբերությունները, իսկ որպես հետազոտության առարկա հանդես է գալիս ընդդատության ինստիտուտը և դրա իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը ընդդատության ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և վերլուծությունը, դրանց լուծման հնարավոր ուղիների մատնանշումը և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առաջարկների մշակումը:

Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

1) բացահայտել ընդդատության ինստիտուտի նպատակը, հիմնական հատկանիշները և բնորոշել ընդդատության ինստիտուտը,

2) ուսումնասիրել ընդդատության տեսակներից յուրաքանչյուրը, որոշել յուրաքանչյուրի իրավական բնույթը, նպատակը և կանոնների իրավաչափ կիրառման պայմանները,

3) ուսումնասիրել ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում,

4) գնահատել ձևավորված իրավակիրառ պրակտիկան և վեր հանել առկա հիմնախնդիրները,

5) կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել ընդդատության ինստիտուտը կարգավորող քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների կատարելագործման առաջարկներ՝ այդպիսով նպաստելով քննարկվող ինստիտուտի ամրապնդմանը և զարգացմանը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են ՀՀ և այլ պետությունների իրավական ակտերը, միջազգային-իրավական փաստաթղթերը, դատական պրակտիկայի նյութերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակներով և խնդիրներով՝ կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս համալիր և բազմակողմանի դիտարկվել է ընդդատության ինստիտուտը՝ հաշվի առնելով ինչպես դատավարագիտության մեջ հանդիպող հայեցակետերը, այնպես էլ ձևավորված իրավակիրառ պրակտիկան: Դրանում բացահայտվել է ընդդատության ինստիտուտի հատկանիշները, ձևակերպվել է ընդդատության ինստիտուտի հասկացությունը, ուսումնասիրության առարկա են դարձվել ընդդատության առանձին տեսակները, բացահայտվել է դրանցից յուրաքանչյուրի իրավական բնույթը, նպատակը և կանոնների իրավաչափ կիրառման պայմանները: Նախատեսվել է տարածքային ընդդատության նոր տեսակ՝ իր կանոններով և համապատասխան կարգավորումներով: Աշխատանքում քննարկման առարկա է դարձել և համա-

կողմանի վերլուծության ենթարկվել նաև ընդդատության կանոնների խախտման դատավարական հետևանքների հետ կապված հարցերը: Նշվածի արդյունքում կատարվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորոյթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Ընդդատությունը, հանդիսանալով քաղաքացիական գործը վարույթ ընդունելու, քննելու, լուծելու, մի շարք հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում դատարանների իրավասությունը որոշող չափանիշ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որը կարգավորում է օրենքով սահմանված կարգով սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության ենթակա իրավաբանական գործերի բաշխումը առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև, ինչպես նաև գործի ընդդատությանը համապատասխան այն մի դատարանից մեկ այլ դատարանը փոխանցելու հետ կապված հարցերը:

2. Բացառիկ ընդդատության կանոնի սահմանման չափանիշ պետք է դիտարկել հայցի օբյեկտը և այդ օբյեկտի հետ կապված պահանջը: Որպես օբյեկտ դիտարկվում է անշարժ գույքը, իսկ որպես այդ օբյեկտի հետ կապված պահանջ՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ պահանջը:

Հետևաբար, առաջարկվել է ՀՀ ՔԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ կերպ. «Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը ներկայացվում են անշարժ գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Այն դեպքերում, երբ ներկայացված պահանջները վերաբերվում են մի քանի անշարժ գույքերի, որոնք գտնվում են տարբեր դատարանների տարածքներում, հայցը ներկայացվում է այդ անշարժ գույքերից որևէ մեկի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան՝ հայցվորի ընտրությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ այդ վայրի դատարաններից մեկը հանդիսանում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի առաջին ատյանի դատարանը: Այդ դեպքում, հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան, որտեղ գտնվում է անշարժ

գույքը»:

3. Քննարկման առարկա դարձնելով այլընտրանքային ընդդատության և բացառիկ ընդդատության նորմերի փոխհարաբերակցության հարցը, այսինքն՝ այն դեպքերը, երբ ներկայացված հայցադիմումի պահանջներից մեկը ընդդատյա է այլընտրանքային, մյուսը՝ բացառիկ ընդդատության կանոններով սահմանվող դատարաններին, եկել ենք այն եզրահանգման, որ այլընտրանքային կամ բացառիկ ընդդատության կանոններից մեկին նախապատվություն տալու հարցը պետք է լուծվի նախ և առաջ այդ նորմերով սահմանված կանոնների սահմանման նպատակի և այդ կանոնների իրավական բնույթի հաշվառմամբ:

Այլընտրանքային ընդդատությունը իր բնույթով բարելավող բնույթի նորմեր է պարունակում, իսկ բացառիկ ընդդատությունը, ընդհակառակը, սահմանափակող բնույթի, հետևաբար այլընտրանքային և բացառիկ ընդդատության կանոնների միջև ընտրությունը պետք է կատարվի այլընտրանքային ընդդատության կանոններին նախապատվություն տալով:

Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նպատակահարմար է ամրագրել, որ միաժամանակ բացառիկ և այլընտրանքային ընդդատություն ունեցող պահանջներով հայցը պետք է ներկայացվի այլընտրանքային ընդդատության կանոններով սահմանված առաջին ատյանի դատարան:

4. Միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը իրենից ներկայացնում է տարածքային ընդդատության այնպիսի տեսակ, որի դեպքում մի գործի ընդդատությունը որոշվում է դրա հետ կապված այլ գործի ընդդատությամբ և կանխորոշում կոնկրետ դատարան դիմելու իրավունքը:

Որպես միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների սահմանման չափանիշները պետք է դիտարկել հետևյալը.

- Հարուցվող հայցի հետ կապված արդեն քննվում է կամ քննվել է գործ, որոնք օբյեկտիվորեն կապված են միմյանց հետ,
- Հարուցվող հայցով և արդեն քննվող կամ քննված գործով դատավարության սուբյեկտները նույն են:

Ասվածի հիման վրա առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առանձնացնել միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը՝ որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ, հետևյալ կանոններով՝

«1. Հակընդեմ հայցը ներկայացվում է սկզբնական հայցի քննության վայրի առաջին ատյանի դատարան:

2. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող

երրորդ անձանց հայցերը ներկայացվում են սկզբնական հայցի քննության վայրի առաջին ատյանի դատարան:

3. Գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

4. Անձը, որի դեմ կիրառվել է հայցի նախնական ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի նախնական ապահովման միջոց պահանջած անձի՝ նախնական ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե սահմանված ժամկետում չի ներկայացվել հայցադիմում այն պահանջով, որի կապակցությամբ կիրառվել է նախնական ապահովման միջոց, կամ ներկայացված հայցը մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով:

5. Գործին մասնակցող անձը, որի միջնորդությամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

5. Միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների և տարածքային ընդդատության այլ տեսակների կանոնների միջև մրցակցություն առաջանալու դեպքերում՝ դրանցից մեկին նախապատվություն տալու հարցի կարգավորումը պահանջում է առանձնացնել միմյանց հետ կապված գործերի ընդդատության երկու տեսակ՝

- Պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատություն,
- Ոչ պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատություն:

Պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատության բնույթն այնպիսին է, որ միմյանց հետ կապված գործերը հնարավոր է լիաբժեք քննել և լուծել միայն դրանց համատեղ քննության արդյունքում, որի դեպքում տարածքային ընդդատության մյուս տեսակները կիրառման ենթակա չեն: Ընդդատության այս տեսակի մեջ են մտնում հակընդդեմ հայցերը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ

անձանց հայցերը:

Ոչ պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատության կանոնների դեպքում նոր հարուցվող հայցը ևս կապված է արդեն քննվող կամ քննված գործի հետ, սակայն այս դեպքում ընդդատությունը այս կանոնները պարտադիր չեն, դրանց կիրառման հնարավորությունը թողնված է հայցվորի կամահայտնությանը և դրանց և ընդդատության այլ տեսակների միջև մրցակցություն առաջանալու դեպքում դրանց նախապատվություն չի տրվում: Ընդդատության այս տեսակի մեջ են մտնում հայցի ապահովմամբ, հայցի նախնական ապահովմամբ կամ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չկատարելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով գործին մասնակցող անձանց կամ այլ անձանց կողմից ներկայացվող հայցերը:

Ասվածի հիման վրա, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատության դեպքում տարածքային ընդդատության այլ կանոնները կիրառման ենթակա չեն:

6. Հայցադիմումի ընդունելության հարցը որոշելիս ենթակայության կամ ընդդատության կանոնները պահպանված չլինելու դեպքում անհրաժեշտ է սահմանել ընդհանուր իրավասության դատարանի կողմից հետևյալ որոշումների կայացման հնարավորությունը՝

- Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, եթե գործը ենթակա չէ որևէ դատարանում քննության,
- Հայցադիմումը վերահասցեագրելու մասին, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Քաղաքացիական գործերը ժամանակին և ճիշտ քննելու միջոցով անձի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքները, ազատությունները և օրինական շահերը դատարանում պաշտպանելը առավել արագ և առանց խոչընդոտների ապահովելու շահից ելնելով՝ առաջարկվում է հայցադիմումի ընդունելության փուլում տարածքային ընդդատության կանոնի խախտման պարագայում հրաժարվել հայցադիմումը վերադարձնելու առկա կարգավորումից: Փոխարենը առաջարկվում է նախատեսել այնպիսի կարգավորում, որի դեպքում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում հայտնաբերելով, որ գործն իրեն ընդդատյա չէ, այն հանձնում է ըստ ընդդատության, ինչն էլ իր հերթին կապահովի նաև քաղաքացիական գործով վարույթի իրավաչափ հարուցումը:

Գործի քննության փուլում ենթակայության և ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները պետք է հանգեն հետևյալին՝

- Գործի վերահասցեագրում, եթե գործի քննության փուլում բացա-

հայտվում է, որ գործը ենթակա չէ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քննությանը,

- Գործի վարույթի կարճում, եթե վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության,
- Գործի հանձնում այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:

Միաժամանակ, կարծում ենք, որ քաղաքացիական դատավարությունում սահմանելով վերահասցեագրման ինստիտուտը՝ անհրաժեշտ է վերահաս դատական ատյաններին ևս օժտել վերահասցեագրման լիազորությամբ:

7. Անդրադառնալով ընդդատության կանոնների խախտման հիմքով դատական ակտի բեկանման հնարավորության հարցին՝ եկել ենք այն եզրահանգման, որ ընդդատության կանոնների խախտումը ինքնին չի կարող հանգեցնել դատական ակտի բեկանման:

Տարածքային ընդդատության կանոնների խախտումը դատական ակտի բեկանման հիմք կարող է հանդիսանալ միայն այն դեպքերում, երբ պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելիս առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, սակայն դատարանը չնայած ներկայացված առարկությանը գործը չի հանձնում իրավասու դատարանի քննությանը, քանի որ նման դեպքերում խախտվում է պատասխանողի սահմանադրորեն ամրագրված «իր դատարանում» գործի քննության իրավունքը:

Վերագործության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է ընդդատության ինստիտուտի ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր աշխատանքը հայ իրավագիտության մեջ: Բացի այդ, ատենախոսությունում առկա վերլուծությունները, եզրահանգումները, առաջարկները կարևոր նշանակություն կարող են ունենալ քաղաքացիական իրավունքի գիտության զարգացման համար:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է ընդդատության հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությանը: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց

հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ, իրավակիրառ գործունեության ընթացքում, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հեղազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Արենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, նպատակը և խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության իրավական, փորձառական, մեթոդոլոգիական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ «Ընդդատությունը որպես դատարանների միջև քաղաքացիական գործերի բաշխման իրավական կառուցակարգ» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Քաղաքացիական գործերով ընդդատության ինստիտուտի հասկացությունը և իրավական բնույթը» վերտառությամբ, ներկայացվել են ընդդատության բնորոշման հարցում առկա մոտեցումները, վեր են հանվել ընդդատության ինստիտուտի հիմնական հատկանիշները, ձևակերպվել է ընդդատության ինստիտուտի հասկացությունը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Քաղաքացիական գործերով դատական ընդդատության դասակարգման հիմնախնդիրները» վերտառությամբ, ներկայացվել է ընդդատության տեսակների դասակարգման չափանիշները, տրվել է դրանց դասակարգումը, քննարկվել են դրանց

տարբերությունները և նմանությունները:

Երկրորդ գլուխը՝ «Տարածքային ընդդարմության տեսակները» վերտառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Ընդհանուր տարածքային ընդդարմություն» վերտառությամբ, ներկայացվել է տարածքային ընդդարմության ընդհանուր կանոնի իրավական բնույթը, նշված կանոնի անշեղ կիրառման նպատակով բացահայտվել են պատասխանողի «բնակության վայր», «հաշվառման վայր» և «գտնվելու վայր» հասկացությունները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Այլընտրանքային ընդդարմություն» վերտառությամբ, մանրամասն հետազոտվել են այլընտրանքային ընդդարմության կանոններից յուրաքանչյուրը, այդ կանոնների իրավաչափ կիրառման պայմանները և ներկայացվել են այդ կանոնների կատարելագործմանն ուղղված առաջարկություններ, այդ թվում առաջարկվել է այլընտրանքային ընդդարմության նոր կանոնի նախատեսում:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Պայմանագրային ընդդարմություն» վերտառությամբ, ուսումնասիրության առարկա է դարձվել «ընդդարմության մասին համաձայնությունը», վեր են հանվել այն հանգամանքները (պայմանները), որոնց առկայության դեպքում դատարանը կարող է եզրահանգում կատարել այն մասին, որ ընդդարմության մասին համաձայնությունը հանգեցնում է իրավաբանական հետևանքների:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Բացառիկ ընդդարմություն» վերտառությամբ, ձևակերպվել է բացառիկ ընդդարմության սահմանման չափանիշը, քննարկվել է բացառիկ ընդդարմության և տարածքային ընդդարմության այլ կանոնների փոխհարաբարեկցության հարցը, մանրամասն ներկայացվել և հետազոտվել են բացառիկ ընդդարմության առանձին կանոնները:

Երկրորդ գլխի հինգերորդ պարագրաֆում՝ «Միմյանց հետ կապված գործերի ընդդարմություն» վերտառությամբ, ներկայացվել է միմյանց հետ կապված գործերի ընդդարմությունը որպես տարածքային ընդդարմության ինքնուրույն տեսակ նախատեսելու անհրաժեշտության հարցը, տրվել է միմյանց հետ կապված գործերի ընդդարմության հասկացությունը և ներկայացվել են միմյանց հետ կապված գործերի ընդդարմության առանձին կանոնները:

Երրորդ գլուխը՝ «Ընդդարմության կանոնների խախտման հետևանքները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Ընդդարմության կանոններ»

րի խախտման հետևանքները քաղաքացիական գործի հարուցման փուլում» վերտառությամբ, ուսումնասիրվել է ընդդատության կանոնների խախտման հիմքով հայցադիմումի վերադարձման հիմքը, ներկայացվել է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը՝ առաջարկելով այն նախատեսել քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Ընդդատության կանոնների խախտմամբ քաղաքացիական գործի քննության և լուծման իրավական հետևանքները» վերտառությամբ, ուսումնասիրվել են ընդդատության կանոնների խախտման հետևանքները քաղաքացիական գործի քննության փուլում, ինչպես նաև քննարկվել է այն հարցը, թե արդյոք ընդդատության կանոնների խախտումը կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման:

Արենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները.

1. Գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից պարզ է դառնում, որ դրանում առարկայական ընդդատության ինստիտուտը առանձին չի նախատեսվել, այլ այն ներառվել է ենթակայության ինստիտուտի շրջանակներում:

Ենթակայական մասին ՀՀ ՔԴՕ-ում ամրագրված նորմերի վերլուծության հիման վրա առանձնացրել ենք ենթակայության կանոնները կարգավորող երկու մեթոդ: Առաջին մեթոդը թվարկման մեթոդն է, որի օգնությամբ սահմանվում են այն կատեգորիայի գործերը, որոնք ենթակա են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քննությանը: Ենթակայության որոշման երկրորդ մեթոդը՝ բացառման մեթոդն է, երբ գործերի ամբողջ ծավալից բացառվում են որոշակի գործեր, որոնք ենթակա են դատական համակարգի այլ օղակների քննությանը:

Գործող ՀՀ ՔԴՕ պարունակում է ենթակայության որոշման ինչպես թվարկման, այնպես էլ բացառման մեթոդները, ինչը թույլ է տալիս խոսելու ենթակայության որոշման երրորդ՝ խառը մեթոդի գոյության մասին, որի պարագայում ենթակայության կանոնները որոշվում են թվարկման և բացառման մեթոդների զուգակցմամբ:

2. Ընդհանուր տարածքային ընդդատության կանոնի անշեղ կիրառումն ապահովելու նպատակով բացահայտվել են պատասխանողի «բնակության վայր», «հաշվառման վայր» և «գտնվելու վայր» հասկացությունները:

Ֆիզիկական անձի բնակության վայր է համարում բնակելի տունը, բնակարանը կամ այլ վայրը, որը նախատեսված է բնակվելու համար, որտեղ քաղաքացին մշտապես, առավելապես կամ ժամանակավորապես ապ-

րում է:

Հաշվառումը կարելի է դիտարկել ՀՀ տարածքում ֆիզիկական անձանց գրանցման եղանակ, որը բնութագրում և արտացոլում է ֆիզիկական անձի ներկայության փաստը որևէ կոնկրետ վայրում: Հետևաբար, «հաշվառման վայրը» անձի բնակչության պետական ռեգիստրին տրամադրած հասցեն է, որը ենթադրաբար հանդիսանում է իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն:

Իրավաբանական անձի գտնվելու վայր պետք է դիտարկել իրավաբանական անձի պետական գրանցման վայրը:

3. ՀՀ ՔԴՕ-ով անհրաժեշտ է հստակեցնել, որ այլընտրանքային ընդդատության կանոնի առկայության դեպքում հայցվորը պահպանում է նաև ընդհանուր տարածքային ընդդատություն կիրառելու իր իրավունքը և կարող է ընտրություն կատարել ոչ միայն օրենքով նախատեսված մի քանի՝ այլընտրանքային դատարանների միջև, այլ կարող է ընտրել հենց ընդհանուր տարածքային ընդդատության վայրի դատարանը: Բացի այդ, անհրաժեշտ է բացառել այն հնարավոր իրավիճակները, երբ հայցվորը միաժամանակ նույն հայցադիմումը ներկայացնի երկու և ավելի իրավասու դատարանների և առաջանա խնդիր, թե իրավասու դատարաններից որն է քննելու ներկայացված հայցադիմումը: Հետևաբար, առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ-ի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթով. «Հայցվորն իրավունք ունի ընտրություն կատարել մի քանի իրավասու դատարանների միջև, որոնց սույն օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան ընդդատյա է գործը: Այդ դեպքում գործը քննում է այն դատարանը, որին առաջինն է ներկայացվել հայցադիմումը»:

4. Առաջարկում ենք սահմանել այլընտրանքային ընդդատության կանոն, որի համաձայն՝ ազատագրվման վայրում գտնվող անձի դեմ հայցը կարող է ներկայացվել նաև հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան:

5. Պայմանագրային ընդդատությունը դատավարական նորմերի ամբողջություն է, որը կարգավորում է քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերի՝ մինչև դատարան հայցադիմում ներկայացանելը կողմերի գրավոր համաձայնությամբ սահմանվող ընդդատությունը:

Պայմանագրային ընդդատության մասին համաձայնության առարկա կարող է հանդիսանալ միայն արդեն ծագած վեճը:

Դատարանները հայցադիմումը վարույթ ընդունելու ժամանակ պետք է ստուգեն արդյոք համապատասխանում է ընդդատության մասին համաձայնության ծավալը ներկայացված վեճի առարկային, և երկրորդ արդյոք հայ-

ցը ներկայացվել է այն դատարանին, որը կողմերի համաձայնությամբ սահմանված է եղել: Միայն այս պայմանների պահպանման պարագայում է ներկայացված հայցադիմումը ենթակա վարույթ ընդունման:

6. Թեև օրենսդիրը կողմերին իրավունք է վերապահել փոխադարձ համաձայնությամբ փոփոխել ընդահուր տարածքային և այլընտրանքային ընդդատության կանոնները, սակայն կողմերի համաձայնությունը ընդդատության փոփոխության վերաբերյալ պետք է լինի հստակ և որոշակի, այլ ոչ թե ձևակերպված լինի այնպես, որ գործն ընդդատյա լինի ցանկացած դատարանի: Հետևաբար, կողմերը որպես իրավասու դատարան ընդահուր իրավասության դատարանները կարող են սահմանել միայն այն դեպքում, եթե նրանց որոշման հստակության աստիճանը բավարար է այնքանով, որ միանշանակ սահմանվի իրավասու դատարանը:

7. Պայմանագրային ընդդատության մասին համաձայնություն կարող են կնքել իրավունքի ցանկացած սուբյեկտներ, բայց դատարանը գործով վարույթի հարուցման փուլում պետք է ստուգի, թե արդյոք տվյալ համաձայնության կողմերը համընկնում են դատարան ներկայացված գործով իրավահարաբերության կողմերի հետ, քանի որ պայմանագրային ընդդատության մասին համաձայնության կողմ չհանդիսացող անձի համար տվյալ համաձայնությունը չի կարող համարվել պարտադիր:

8. Պայմանագրային ընդդատություն կնքելու վերաբերյալ համաձայնությունը պետք է սահմանվի կողմերի միջև գրավոր համաձայնությամբ, որը կարող է արտահայտվել առանձին պայմանագիր կնքելով կամ կողմերի միջև կնքված նյութաիրավական պայմանագրի մեջ առանձին կետ նախատեսելու ձևով, կամ նամակներով, հեռագրով կամ այդպիսի համաձայնության ամրագրումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու ձևով՝ պայմանով, որ կա հնարավորություն հստակորեն սահմանել, որ տվյալ փաստաթուղթը բխում է պայմանագրի կողմերից:

Պայմանագրային ընդդատություն չի կարող սահմանվել պարտադիր միմյանց հետ կապված գործերի ընդդատության դեպքերում:

9. Առաջարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածում ամրագրված գործը մի դատարանից մեկ այլ դատարան հանձնելու կանոնը շարադրել հետևյալ կերպ. «Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝

1) եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ.

2) գործը չի կարող քննվել այն դատարանում, որն այն ընդունել է վա-

րույթ.

3) երբ պատասխանողը, որի հաշվառման (բնակության, գտնվելու) վայրը հայտնի չի եղել առաջ, կամ որի հաշվառման (բնակության, գտնվելու) վայրը սխալ է որոշվել հայցվորի կողմից, միջնորդություն հարուցի գործն իր բնակության վայրի դատարանին հանձնելու մասին»:

10. Մեր կարծիքով դատական ակտը դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով կարող է բեկանվել հետևյալ երեք պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. Առաջին՝ եթե թույլ տրված խախտումը էական է: Երկրորդ՝ այն ազդել է գործի ելքի վրա: Երրորդ՝ առանց թույլ տրված խախտման վերացման հնարավոր չէ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը:

Ընդդատության կանոնների խախտման պարագայում դատական ակտի բեկանումը պետք է պայմանավորել այդպիսի խախտումներ առաջացրած հետևանքներով: Եթե վերը նշված հետևանքները առկա են, ապա դա պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման: Այս տրամաբանությամբ գտնում ենք, որ ընդդատության կանոնների խախտումը ինքնին չի կարող հանգեցնել դատական ակտի բեկանման: Տարածքային ընդդատության կանոնների խախտումը դատական ակտի բեկանման հիմք կարող է հանդիսանալ միայն այն դեպքերում, երբ պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, սակայն դատարանը չհայտնի ներկայացված առարկությանը գործը չի հանձնում իրավասու դատարանի քննությանը:

Ենթակայության կանոնների խախտումը պետք է հանդիսանա դատական ակտի անվերապահ բեկանման հիմք:

Արենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հեղինակ հրապարակումներում.

1) Միքայելյան Ա. «Քաղաքացիական գործերով ընդդատության ինստիտուտի իրավական բնույթը և էության հիմնահարցերը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2016, էջեր 366-384:

2) Միքայելյան Ա. «Ընդդատության կանոնների խախտմամբ քաղաքացիական գործի քննության և լուծման իրավական հետևանքները», Պետություն և իրավունք, թիվ 3 (73) 2016թ., էջեր 91-102:

3) Միքայելյան Ա. «Պայմանագրային ընդդատությունը քաղաքացիա-

կան դատավարությունում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջեր 457-479:

4) Միքայելյան Ա. «Բացառիկ ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում», Պետություն և իրավունք, թիվ 3-4 (81-82) Երևան 2018, էջեր 63-75:

5) Միքայելյան Ա. «Ընդդատության կանոնների խախտման հետևանքները քաղաքացիական գործի հարուցման փուլում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 2(2)2018/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2019, էջեր 354-369:

6) Միքայելյան Ա. «Միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ», Օրինականություն, Եր., 2020, N 118, էջեր 57-66:

7) Միքայելյան Ա. «Ընդդատության կանոնների խախտման դատավարական հետևանքները հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում», Արդարադատություն, Երևան, 2021, N 1 (53), էջեր 77-85:

АНИ САРМЕНОВНА МИКАЕЛЯН

ПРОБЛЕМЫ ПОДСУДНОСТИ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

РЕЗЮМЕ

Право на судебную защиту, кроме всего прочего, предполагает также, что разбирательство и разрешение юридического дела должно быть произведено составом суда, установленного законом, а не избранного своевольно. Осуществление указанного права обеспечивается такими процессуальными механизмами, какими являются институты подведомственности и подсудности.

Надлежащая подсудность дел, как необходимый компонент справедливого судебного разбирательства, является фундаментальной правовой ценностью. Фундаментальная правовая ценность надлежащей подсудности состоит именно в том, что никто не должен быть лишен права рассмотрения его дела в том суде и тем судьей, подсудность дела которым оговорена законом. Вследствие нарушения правил подсудности страдают не только интересы отдельных лиц, но и правосудие само по себе.

В ходе судебно-правовых реформ, осуществляемых в Республике Армения, судебная система несколько раз подвергалась существенным изменениям, в результате чего были существенно изменены также полномочия юрисдикционных органов, в том числе судов, в сфере разбирательства и разрешения юридических дел. Внесенные изменения не обошли также институт подсудности гражданских дел.

Положительно оценивая законодательные изменения правовых норм, регулирующих институт подсудности, все же следует указать, что существующее правовое регулирование все еще далеко от идеального: формулировки, присутствующие в ряде правовых норм, оставляют место для разночтений, а ряд вопросов остался вне круга внимания законодательного органа. В этой связи, есть необходимость более глубоких изменений правовых норм, регулирующих институт подсудности, о чем свидетельствует также исследованная судебная практика, сформировавшаяся относительно ряда вопросов, поставленных в

диссертации. Вышесказанное обосновывает актуальность выбранной темы и необходимость ее исследования.

В рамках диссертации автор на основании системного анализа выраженных в теории мнений, законодательства РА, международных правовых регулирований, законодательства зарубежных стран, судебной практики автор представляет цель института подсудности, его основные признаки, а также характеризует институт подсудности, рассматривает каждый из видов подсудности, определяет правовой характер, цель и условия правомерного применения каждого вида, анализирует правовые последствия нарушения правил подсудности на разных этапах гражданского судопроизводства.

Научная новизна диссертации состоит в том, что она является первой всеохватывающей работой, посвященной институту подсудности в контексте регулировок недавно принятого Гражданского процессуального кодекса. В рамках диссертации сформулировано новое понятие, которое характеризует институт подсудности, представлены конкретные предложения для переработки и усовершенствования правил подсудности. Предложен новый вид территориальной подсудности вместе с его правилами и соответствующими формулировками. Научная новизна диссертации соответственно проявляется в положениях, представленных на защиту.

Диссертация имеет не только теоретическую, но и практическую ценность, так как исследования, проведенные в рамках диссертации, представленные предложения и их обоснования могут быть использованы и в ходе правотворческой, правоприменительной деятельности, а также способствовать совершенствованию судебной практики.

ANI SARMEN MIKAYELYAN

PROBLEMS OF COURT JURISDICTION IN CIVIL PROCEDURE

SUMMARY

The right to judicial protection, among other things, also provides for the proceedings and resolution of a legal case which must be carried out by a court composition established subject to law and not arbitrarily elected. The exercise of the right referred is ensured through such procedural mechanisms as the institution of court jurisdiction and institution of subject matter jurisdiction.

As a necessary component of a fair trial the adequate court jurisdiction in cases is a fundamental legal value. The fundamental legal value of proper court jurisdiction lies in the fact that no one may be deprived of the right of consideration of his/her case in the court and by the judge whose jurisdiction over that case is stipulated by law. Violation of the rules of court jurisdiction affects not only the interests of individuals but also the justice per se.

In the course of the judicial and legal reforms carried out the judicial system of the Republic of Armenia has undergone significant changes several times whereby the powers of the jurisdictional bodies, including courts, in the field of examination and resolution of legal cases have also been significantly changed. The amendments made have not bypassed the institution of court jurisdiction in civil cases as well.

Assessing positively the legislative changes of the law rules governing the institution of court jurisdiction it should be pointed out that the existing regulatory environment is still far from ideal: the formulations present in a number of law rules are ambiguous and a number of issues has escaped the legislative body's attention. In this regard, deeper changes of the legal norms governing the institution of court jurisdiction are required and the existing judicial practice studied in connection with a number of issues raised in the dissertation call for it. The aforesaid substantiates the urgency of the chosen topic and the need for its research.

In the scope of the dissertation, the author on the basis of the systematic analysis of the views expressed in the theory, the legislation of the Republic of

Armenia, the international legal regulations, the legislation of foreign countries, judicial practice presents the purpose of the institution of court jurisdiction, its main features, and designates the institution of court jurisdiction, considers each of the types of court jurisdiction, determines the legal nature, purpose, and conditions for the lawful application of each type, analyzes the legal consequences of violation of the rules of court jurisdiction at different stages of civil proceedings.

The scientific novelty of the dissertation lies in the fact that it is the first comprehensive work addressed to the institution of court jurisdiction within the context of the regulations under the recently adopted Civil Procedure Code. A new concept which characterizes the institution of court jurisdiction has been formulated within the framework of the dissertation, specific proposals for revising and improving the rules of court jurisdiction have been presented. A new type of territorial jurisdiction along with its rules and corresponding formulations has been proposed. The scientific novelty of the dissertation is accordingly manifested in the provisions presented to the defense of the thesis.

The dissertation has not only theoretical but also practical value since the research carried out within its framework, the proposals presented and their basis can be used in the course of lawmaking, law enforcement as well as contribute to the improvement of judicial practice.